ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ք. Մարտունի

30-ը ապրիլի 2024 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

2024 թվականի ապրիլի 30-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի երրորդ հերթական նիստը: Նիստին ներկա էին ավագանու 19 անդամները: Բացակա էին՝ Հայկ Ալեքսանյանը, Պապ Դանիելյանը, Արարատ Խաչատրյանը, Մարինա Հովեյանը, Կարինե Հովհաննիսյանը, Անդրանիկ Մովսիսյանը, Սեդրակ Սահակյանը, Լուսինե Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին բնակավայրերի վարչական ղեկավարները և աշխատակազմի բաժինների պետերը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Սվետլանա Հովհաննիսյանը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 30-ի վեցերորդ նստաշրջանի երրորդ հերթական նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 19-ի №5-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

2) Համայնքային սեփականություն հանդիսացող տարածքների (հողամասերի) սահմաններին կից Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի, Ծովինար, Ներքին Գետաշեն, Գեղհովիտ բնակավայրերի բնակիչների կողմից իրենց հողամասերում ինքնակամ կառուցված շինությունների օրինականացմանը համաձայնություն տալու մասին.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչներ Մանուշ Արարատի Սահակյանին, Սամվել Տիգրանի Քեֆոյանին, Սևակ Վազգենի Վարդանյանին, Վահան Ռաֆիկի Գալոյանին, Ձորագյուղ բնակավայրի բնակիչ Վալերիկ Գարուշի Մանուկյանին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով շինություններ կառուցելու համաձայնություն տալու մասին.

4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին.

5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 15-ի №183-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

6) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող՝ Աստղաձոր բնակավայրի նորակառույց գազատարը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Մարտունու ԳԳՄ-ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու համաձայնություն տալու մասին.

7) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող՝ Վարդենիկ բնակավայրի նորակառույց գազատարը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Մարտունու ԳԳՄ-ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու համաձայնություն տալու մասին.

8) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող՝ Զոլաքար բնակավայրի նորակառույց գազատարը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Մարտունու ԳԳՄ-ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու համաձայնություն տալու մասին.

9) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող՝ Ներքին Գետաշեն բնակավայրի նորակառույց գազատարը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Մարտունու ԳԳՄ-ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու համաձայնություն տալու մասին.

10) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 15-ի №179-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

11) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 29-ի №26-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

12) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայրի 112-րդ փողոց, թիվ 2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-013-0120-0008 կադաստրային ծածկագրով 0.0541 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ֆոտովոլտային կայան կառուցելու համաձայնություն տալու մասին.

13) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-085-0312-0005 կադաստրային ծածկագրով 0.1156 հա մակերեսով հողամասում ֆոտովոլտային կայան կառուցելու համաձայնություն տալու մասին.

14) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի բնակիչներին դրամական օգնություններ տրամադրելու մասին.

15) «Հայ Արտ» փրոդյուսերական կենտրոնին նվիրատվությամբ գումար տրամադրելու մասին.

16) Մարտունի համայնքի հանրակրթական դպրոցների ավարտական դասարաններին վերջին զանգի կապակցությամբ և Մարտունու պետական բժշկական քոլեջի ավարտական կուրսերին ընթացիկ դրամաշնորհ հատկացնելու մասին.

17) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծակքարի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին.

18) 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծակքարի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

19) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի չորրորդ հերթական նիստի օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվերակությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը և Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի №5-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՀԱԿՈԲ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 30-ի №246-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» №5-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվերակությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը և Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ (ՀՈՂԱՄԱՍԵՐԻ) ՍԱՀՄԱՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ, ԾՈՎԻՆԱՐ, ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ, ԳԵՂՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՀԱԿՈԲ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի №04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-23 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 128-րդ կետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝

   1) Սամվել Այվազի Հակոբյանի կողմից Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոց, թիվ 32 հասցեում գտնվող իր հասարակական կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն

հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած խանութն օրինականացնելու համար.

2) Սամվել Այվազի Հակոբյանի կողմից Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Պռոշյան փողոց, թիվ 9 հասցեում գտնվող իր հասարակական կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած խանութն օրինականացնելու համար.

3) Էդգար Սիմոնի Օհանյանի կողմից Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի 5-րդ թաղամասի 25-րդ փողոց, թիվ 1 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած շինություններն օրինականացնելու համար.

4) Քրիստինե Լևոնի Գևորգյանի կողմից Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի 4-րդ թաղամասի 4-րդ փողոց, թիվ 7 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած շինությունն օրինականացնելու համար.

5) Սաբիթ Սեդրակի Իսպիրյանի կողմից Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դուրան թաղամասի 4-րդ փողոց, թիվ 46 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած շինություններն օրինականացնելու համար.

6) Դավիթ Ռաֆիկի Խաչատրյանի կողմից Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դեմեր թաղամասի 1-ին փողոց, թիվ 1/2 հասցեում գտնվող իր հասարակական կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած շինություններն օրինականացնելու համար.

7) Արմեն Գնելի Սիմոնյանի կողմից Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դեմեր թաղամասի 7-րդ փողոց, թիվ 3 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած շինություններն օրինականացնելու համար.

8) Աշոտ Աղասու Ղիմոյանի կողմից Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դեմեր թաղամասի 5-րդ փողոց, թիվ 27/1 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած շինություններն օրինականացնելու համար.

9) Աշոտ Աբովի Խաչատրյանի կողմից Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի 1-ին փողոց, 4-րդ նրբանցք, թիվ 5/1 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած շինություններն օրինականացնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվերակությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը և Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՄԱՆՈՒՇ ԱՐԱՐԱՏԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ, ՍԱՄՎԵԼ ՏԻԳՐԱՆԻ ՔԵՖՈՅԱՆԻՆ, ՍԵՎԱԿ ՎԱԶԳԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ, ՎԱՀԱՆ ՌԱՖԻԿԻ ԳԱԼՈՅԱՆԻՆ, ՁՈՐԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԱԼԵՐԻԿ ԳԱՐՈՒՇԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԻ (ՀՈՂԱՄԱՍԻ) ՍԱՀՄԱՆԻՆ ԿԻՑ՝ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի №04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-23 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 128-րդ կետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝

1) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Մանուշ Արարատի Սահակյանին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծից 1 մետր հեռավորությամբ, իր՝ Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին տափ թաղամասի 10-րդ փողոց, թիվ 13 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել նկուղային մասով բնակելի տուն.

2) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Սամվել Տիգրանի Քեֆոյանին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դուրան թաղամասի 4-րդ փողոց, թիվ 9 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել ամառային խոհանոց.

3) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Սևակ Վազգենի Վարդանյանին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դեմեր թաղամասի 7-րդ փողոց, թիվ 3/1 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել գոյություն ունեցող բնակելի տան մանսարդային հարկ.

4) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Վահան Ռաֆիկի Գալոյանին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դուրան թաղամասի 3-րդ փողոց, թիվ 24 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել ավտոտնակ-ամառային խոհանոց.

5) Մարտունի համայնքի Ձորագյուղ բնակավայրի բնակիչ Վալերիկ Գարուշի Մանուկյանին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Ձորագյուղ բնակավայրի 10-րդ

փողոց, թիվ 2 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել անասնագոմ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվերակությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը և Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԹԱԹՈՒԼ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվերակությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը և Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի №183-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՀԱԿՈԲ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 15-ի

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող՝ Աստղաձոր, Վարդենիկ, Զոլաքար և Ներքին Գետաշեն բնակավայրերի նորակառույց գազատարները «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Մարտունու ԳԳՄ-ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու համաձայնություն տալու մասին» №183-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվերակությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը և Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԱՍՏՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԳԱԶԱՏԱՐԸ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ՄԱՐՏՈՒՆՈՒ ԳԳՄ-ԻՆ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող՝ Աստղաձոր բնակավայրի 62-րդ փողոցի թիվ 5 գազատար խողովակաշարը (հիմք՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական N08042024-05-0085, տրված՝ 08.04.2024 թ., d=76մմ, L=398.30 մ, d=159 մմ, d=108 մմ, L=10 մ, L=288.7 մ, d=89 մմ, d=57 մմ, L=10 մ, L=268.8 մ, d=57 մմ, L=65.10 մ տվյալներով գազատար, OTS Q=250 մ³/ժ ճնշման կարգավորիչ, OTS Q=160 մ³/ժ ճնշման կարգավորիչ, 18948360 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Մարտունու ԳԳՄ-ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու համար:
2. Առաջարկել Մարտունի համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող իրավական ձևակերպումները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվերակությանը չի մասնակցել Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԳԱԶԱՏԱՐԸ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ՄԱՐՏՈՒՆՈՒ ԳԳՄ-ԻՆ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՀԱԿՈԲ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող՝ Վարդենիկ բնակավայրի 39-րդ փողոցի թիվ 31 գազատար խողովակաշարը (հիմք՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական N08042024-05-0066, տրված՝ 08.04.2024 թ., D=108 մմ, L=95 մ, D=110 մմ, L=107 մ, D=90 մմ, L=82 մ, D=89 մմ, L=80 մ, D=89 մմ, L=119 մ, D=75 մմ, L=506 մ, D=110 մմ, L=83 մ, D=90 մմ, L=123 մ, D=75 մմ, L=294 մ, D=63 մմ, L=238 մ, D=75 մմ, L=200 մ, D=63 մմ, L=269 մ, D=75 մմ, L=506 մ, D=63 մմ, L=269 մ, 1 ՊԳԿԿ, 24005670 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Մարտունու ԳԳՄ-ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու համար:
2. Առաջարկել Մարտունի համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող իրավական ձևակերպումները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվերակությանը չի մասնակցել Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԶՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԳԱԶԱՏԱՐԸ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ՄԱՐՏՈՒՆՈՒ ԳԳՄ-ԻՆ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՀԱԿՈԲ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող՝ Հոլաքար բնակավայրի 15-րդ փողոցի թիվ 45 գազատար խողովակաշարը (հիմք՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական N08082023-05-0030, տրված՝ 08.08.2023 թ., D=159 մմ, L=457 մ, D=125 մմ, L=354 մ, D=108 մմ, L=106 մ, D=89 մմ, L=103 մ, D=76 մմ, L=338 մ, D=57 մմ, L=257 մ, 31471520 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Մարտունու ԳԳՄ-ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու համար:
2. Առաջարկել Մարտունի համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող իրավական ձևակերպումները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվերակությանը չի մասնակցել Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԳԱԶԱՏԱՐԸ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ՄԱՐՏՈՒՆՈՒ ԳԳՄ-ԻՆ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող՝ Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դուրան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 4 գազատար խողովակաշարը (հիմք՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական N08042024-05-0048, տրված՝ 08.04.2024 թ., գազատար խողովակաշար՝ d=159 մմ-10 մ, d=76 մմ-455 մ, d=108 մմ-311 մ, d=89 մմ-224 մ, (N1) OTS Q=160 մ³/ժ պահարանային ճնշման կարգավորիչ, (N2) OTS Q=160 մ³/ժ պահարանային ճնշման կարգավորիչ, 15061390 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Մարտունու ԳԳՄ-ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու համար:
2. Առաջարկել Մարտունի համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող իրավական ձևակերպումները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվերակությանը չի մասնակցել Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի №179-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրում գտնվող 05-027-0221-0036 կադաստրային ծածկագրով 0.07 հա և 05-027-0221-0003 կադաստրային ծածկագրով 0.21489 հա մակերեսներով համայնքային սեփականություն հանդիսացող հասարակական կառուցապատման հողամասերը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու համաձայնություն տալու մասին» №179-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետում «№19102022-05-0029» թիվը փոխարինել «№03052024-05-0019» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվերակությանը չի մասնակցել Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի №26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 29-ի ««Ծովինարի մանկապարտեզ»

համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին» №26-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման 1-ին կետում «29» թիվը փոխարինել «31» թվով, «24.04.2008» թվերը փոխարինել «25.03.2008» թվերով, «№2592143» թվերը փոխարինել «№29032024-05-0013» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Չեն քվեարկել Սվետլանա Հարությունյանը և Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՍՏՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 112-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-013-0120-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.0541 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ՄՀԵՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայրի 112-րդ փողոց, թիվ 2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-013-0120-0008 կադաստրային ծածկագրով 0.0541 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում կառուցել 50 կՎտ հզորության ֆոտովոլտային կայան՝ համայնքային ենթակայության խորքային հորերի էլեկտրամատակարարումն ապահովելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-085-0312-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.1156 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ՄՀԵՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-085-0312-0005 կադաստրային ծածկագրով 0.1156 հա մակերեսով հողամասում (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արոտավայր) կառուցել 80 կՎտ հզորության ֆոտովոլտային կայան՝ համայնքային ենթակայության խորքային հորերի էլեկտրամատակարարումն ապահովելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՇԱՀԻՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024 թվականի բյուջեից ներքոնշյալ բնակիչներին տրամադրել միանվագ դրամական օգնություններ.
   1) Գեղհովիտ բնակավայրի բնակիչ Հովհաննես Անդրանիկի Սաֆարյանին՝ 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ.
   2) Մարտունի քաղաքի բնակիչ Արևհատ Սարգիսի Աբրահամյանին՝ 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի՝ Հայրենական մեծ պատերազմի վետերաններին տրամադրել միանվագ դրամական օգնություններ՝
   1) Հրաչիկ Աղաջանի Պապեյան (Լիճք բնակավայր) – 100000 (հարյուր հազար) ՀՀ դրամ.
   2) Վոլոդյա Համբարձումի Մուսիկյան (Գեղհովիտ բնակավայր) – 100000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Ա/

Լսեցին

«ՀԱՅ ԱՐՏ»ՓՐՈՊՅՈՒՍԵՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով «Արգարյան» պարային ստուդիայի ղեկավար Ալլա Արգարյանի 19.04.2024 թվականի №2712-Ք դիմումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. «Հայ Արտ» փրոդյուսերական կենտրոնին համայնքի բյուջեից նվիրատվությամբ տրամադրել 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ՝ «Արգարյան» պարի ստուդիայի՝ Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում «Հայկական մշակույթի օրեր» խորագիրը կրող միջոցառմանը մասնակցելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Չի քվեարկել Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

Լսեցին

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՆ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024 թվականի բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման «Հանրակրթական դպրոցներում ուսուցում» նախահաշվի 4819 հոդվածից վերջին զանգի կապակցությամբ Մարտունի համայնքի թվով 22 դպրոցների 32

ավարտական դասարաններին հատկացնել 100000-ական (հարյուր հազարական) դրամ:

2. Մարտունու պետական բժշկական քոլեջի 3 ավարտական կուրսերին հատկացնել 100000-ական (հարյուր հազարական) դրամ ընթացիկ դրամաշնորհ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Չի քվեարկել Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԱԿՔԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծակքարի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերություն:
2. Հաստատել «Ծակքարի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

Լսեցին

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԱԿՔԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. 2024 թվականի համար հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծակքարի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի չորրորդ հերթական նիստի օրը սահմանել 2024 թվականի մայիսի 31-ին, ժամը 15:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

Ավագանու անդամներ՝

ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՏԱՐՈՆ ԱՐՇԱԿՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱԿՈԲ ԲԱՐՈՅԱՆ

ԱՐԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ՕԼԳԱ ԴԱՎԹՅԱՆ

ԿՈՐՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԵԽԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՆԱՂԱՇ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ

ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՈՀԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Սվետլանա Հովհաննիսյանը _____